

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ,, ԻՆ

ՁՈՆ Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆԻ

Արարատեան դաշտերէն դարեր անծիր կ'հոլովին.

Անձեր, դէպքեր կը պանան, կարծես առած քեւն հովին.

Շարան շարան բանակներ, արփայ, իշխան, գորավար՝

Մերք լոյսի մէջ՝ փառայեղ, մերք ալ պատած մութ խաւար:

Վեհ Մասիսի գագաթէն ալեւորներ փաշատես

Կը դիտեն վար՝ վիհին մէջ՝ անծայր պարը, զոր Հադէս՝

Խաղաղութեան մերկ գիրկէն դուրս է դիւքած՝ խոռվագին.

Դաշտեր արին, լեռներ լերկ, կագն ու կոիւր հայ քագին:

Ալեւորներն լուռ մըռայլ՝ հանդիսատես դէպքերուն՝

Լոյս-խաւարով կը գանգեն՝ չուն խօլական, պարն եռուն: —

Ամենակուլ խաւարէն ո՞վ լոյսը մեզ կ'ազատէ.

Մեր պատմութեան էջերէն ո՞վ մըշուշը փարատէ:

Արագածի լանջերէն գետ մը ահեղ կը յորդէ.

Դաշտեր, ժայռեր, ապառած՝ նա կը պատուէ, կը հորդէ:

Ակունքներէ բազմազան նա ջուր կ'առնէ, կ'ուռնանայ,

Ու Սեւանայ կոնքին մէջ նա կը քափի, լընանայ:

Այդ մայրենի բարբառն է՝ իմ պաշտելի հայերէն,

Նուիրական աւանդը՝ մեր անըման հայրերէն:

Ո՞ր աչքերը պիտ' խուզեն անոր գանձը նոյն ակին.

Ո՞ր նուրբ ձեռքը պիտ' քննէ տենդոտ զարկը երակին:

Կամարներէն կիսափուլ Հայաստանի լեռն ու բլուր՝

Հայ հանճարի հըրաշքներ կը պատմեն մեզ մեղմ ու լուռ:

Հայ հոգիէն մորմոգող ցաւի, վիշտի բիւր երգեր

Կախարդ ոյժ մը արուեստի՝ քանաֆ-գրչով է մոգեր:

Պիտի բարձուի՞, ըսէ՛ք մեզ, այդ դիւքանքը կաշկանդիչ.

Պիտի լուծուի՞ն ալ երբեք կապըն հմայքի՝ ժանտ, ֆանդիչ:

Հայ արուեստի, գիտութեան՝ վառ արեւը՝ ձոյլ ոսկի,

Մինչեւ ե՞րբ դեռ շառագոյն ամպի ետին սողոսկի:

Բայց ոչ. տեսէ՛ք. խաւարը կը նահանջէ լեռնէ լեռ.

Ալ կոտրած են դիւքանքի ժանգոտ մըրոտ հին քելեր:

Եւ Դանուբեան ափերէն հերոս մը սէգ, ֆաջարի

Յաղթանակներ կը տօնէ յիսուն տարւան պայֆարի:

Քանի՞ քոհար հայ լեզուի, հայ արուեստի ի՞նչ աւար,

Զոր ի գուր տեղ կը կոծէ ու կը սըգայ ժանտ խաւար:

Յաղթանակի այս տօնիդ, ՀԱՆԴԵՍ, փա՛ռք քեզ ու պարծանք.

Յիսուն անմահ հատորիդ՝ յիսուն նոր շարք կը ցանկանք:

ՈՒՂԵՐԶ

ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

«Հանդէս Ամսօրեայ»

Յնծալից Տօնդ է, տօնդ յիսնամեայ

Ապրէ շատ երկար

Զի դու ցարդ յուրքի այգի մը եղար.

Այգի բարբեր

Զոր Մ'իսիքարեան վեհնացի Հայրեր

Իրենց ֆրոնիքին

Արդար վաստակով ձեռատունկ ըրին.

Ծոցէդ անպառ

Հոսեցնելու անմահն նկատար,

Հայկական մոտին

Զարգացումն յառաջ մղել տենդագին:

Դու նոյն Գանձարան

Հանդիսացար վաղ, հայ ազգայնութեան,

Մեղուաջան փութով

Տակաւ առ տակաւ յայտնաբերելով

Թանգ յիշատակներ՝

Որոնք մոխրածածկ դարերէ ի վեր

Անյայտ մնային

Կամ մոռացութեան խորը սեւ վիհին:

Յետո մը եղար,

«Կա՛ց, արեւ» ըսիր «Թո՛ղ փու լուսաւոր

«Շողերդ ուղղուին

«Հայոց Պատմութեան կէտերուն մէջին:

«Հայը պէտք է որ

«Ա՛լ ճանչնայ ճշդիւ, իր խիստ փառաւոր

«Օրերն անցնալին

«Որուն անտեղեկ է ամենեւին»

Այսպէս դու մարգիչ

Կրքարան մ'եղար, նաեւ զարքուցիչ

Բանասիրութեան

Որ մինչեւ փու օրդ էր կիսակենդան,

Եւ ո՛րքան անքիւ

Նիւթեր լոյս տեսան «Հանդէս»իդ շնորհիւ

Հայ Պատմութեան

Ինչեր փրկեցիր, կարուստի ճանկէն:

Հատորներդ յիսուն

Գերազանցապէս բոլորն ալ գեղուն

Եւ յոյժ շահեկան

Դասերով ընտիր, լուրջ, ուսումնական,

Որով ժողովեցիր

Ինչ որ կը մնար հոս հոն ցանուցիր,

Իբր արտադրութիւն

Անյայտ մնացած հայ Գրիչներուն:

Շքեղ քանգարան

Մ'ես դու ապաքէն, մեծ հանդիսարան,

Ուր հայուն հանճար՝

Կը փայլի իբրեւ փարոս մշտաւառ:

Օ՛ր մաղքեմ քեզ արդ

Բազմերամ տարի, յաջող բարբառս.

Քու քերթերդ ըլլան

Յարաճուն ինչպէս հատիկներ ցորեան,

Աշխարհի ծագէն

Մինչեւ միւս ծագն՝ անոնք վառ պահեն

Հայ սիրտերու մէջ

Ուսման, գիտութեան սէրը միշտ անշէջ.

Եւ հայ կրքութեան

Նախակարապետ ցանգ հանդիսանան:

Պարիս, 21 Յուլիս 1937: